Արձանագրության 3
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/123» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան

08.09.2020թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Չիլինգարյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Շ. Բանտիկյան /գնահատող/, Վ. Աղաբեկյան /գնահատող/,
Մ. Մալխասյան /բացող/, Ա. Սարգսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1.Անհամապատասխանությունը շտկելու մասին

(Կ. Չիլինգարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ Մ.ԲՈՒԱՏ ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում չի շտկվել հայտում առկա անհամապատասխանությունը: Համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետի, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Մ.ԲՈՒԱՏ ՍՊԸ-ն ծանուցվել է առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցմանը 04.09.2020թ-ին և մինչև սույն թվականի սեպտեմբերի 7-ը պարտավոր էր շտկել անհամապատասխանությունը: Սակայն Մ . ԲՈՒԱՏ ՍՊԸ-ի կողմից չի շտկվել անհամապատասխանությունը: Հետևաբար, համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 42-րդ կետի, եթե մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում առկա անհամապատասխանությունը, ապա հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց առաջին չափանաժնի մասով մերժել Մ.ԲՈՒԱՏ ՍՊԸ-ի հայտը և հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/123» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Կ. Չիլինգարյան)

Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցում գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
Մ.ԲՈՒԱՏ ՍՊԸ	Անբավարար/առաջին չափաբաժնի մասով Բավարար /երկրորդ չափաբաժնի մասով/
Լեգենդ քնսթրաքշն ՍՊԸ	Բավարար
Հայկ Համոլիկյան Վարդանի Ա/Ձ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ - 0:

2.2 ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/123 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին չափաբաժնի մասով հաղթող (ընտրված) մասնակից է ճանաչվել Լեգենդ քնսթրաքշն ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված

հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից, իսկ երկրորդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվում Մ . ԲՈՒԱՏ ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Կ. Չիլինգարյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝
Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել Լեգենդ քնսթրաքշն ՍՊԸ-ին, իսկ Կենտրոն եզրաքարերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել Մ.ԲՈՒԱՏ ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

3.3 Անգործության ավարտից հետո ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագրերի նախագծերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Կ. Չիլինգարյան

Անդամներ՝ ---------- Շ. Բանտիկյան

---------- Ա. Սարգսյան

---------- Մ. Մալխասյան

---------- Վ. Աղաբեկյան

Քարտուղար՝ ---------- Ս. Եղիազարյան